ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԴՈՂՍԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ОБЛАСТЬ АРМАВИР
МУНИЦИПАЛИТЕТ
ДОХС

N 96
«03» «10» 2013 թ.

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի մարզպետ
պրն Ա. Դահրամանյանին

Հարգարժան պարոն Դահրամանյան

Ձեզ ենք ներկայացնում Դողս համայնքի ղեկավարի 2013 թվականի սեպտեմբեր ամսվա ընթացքում կայացրած որոշումներն և արձակած կարգադրությունները:
Առդիր 12 թերթ:

Դողս համայնքի ղեկավարի ժ/պ Ռ.Համբարձումյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 9126-13
04 10 2013 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԴՈՂՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

04.09.2013թ. N 6-Ա

ՔՐԻՍՏԻՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով, 170-րդ հոդվածով, հիմք ընդունելով Քրիստինե Գևորգյանի 04.09.2013 թվականի դիմումը .

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. «Մշակույթ» միացյալ տնօրինության տնօրեն Քրիստինե Գևորգյանին 2013 թվականի սեպտեմբերի 4-ից ազատել աշխատանքից:
2. Կատարել վերջնահաշվարկ և վճարել դրամական հատուցում ամենամյա արձակուրդի չօգտագործված օրերի համար:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Դողս համայնքի ղեկավար Մ.Ադամյան

2013 թ. սեպտեմբերի 4
գ. Դողս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԴՈՂՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

04.09.2013թ. N 7-Ա

ԱՐԹՈՒՐ ՓԱՅԼԱԿԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 8-րդ կետով, հիմք ընդունելով Արթուր Համբարձումյանի 2013 թվականի սեպտեմբերի 4-ի դիմումը՝ աշխատանքի ընդունելու խնդրանքով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Արթուր Փայլակի Համբարձումյանին ընդունել աշխատանքի Դողսի «Մշակույթ» միացյալ տնօրինությունում որպես տնօրեն, ըստ հաստատված դրույքաչափի՝ կնքելով աշխատանքային պայմանագիր:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Դողս համայնքի ղեկավար Մ.Ադամյան

2013թ. սեպտեմբերի 4
գ. Դողս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴՈՂՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

04.09.2013թ. N 8-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Ստեղծել հանձնաժողով Դողս համայնքի <Մշակույթ> միացյալ տնօրինությանը պատկանող գույքի հանձնման –ընդունման ՝ համաձայն հավելվածի:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Դողս համայնքի ղեկավար Մ.Աղամյան

2013թ. սեպտեմբերի 4
Գ. Դողս

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Դողս գյուղական
համայնքի ղեկավարի 2013 թվականի
սեպտեմբերի 4-ի N 8-Ա կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

1. Մեսրոպ Ադամյան՝ հանձնաժողովի նախագահ , / համայնքի ղեկավար/:
2. Համբարձումյան Ռաֆիկ՝ հանձնաժողովի անդամ , /աշխատակազմի քարտուղար/:
3. Սվետա Ադամյան՝ հանձնաժողովի անդամ , /գլխավոր մասնագետ/:
4. Աբրահամ Գրիգորյան՝ հանձնաժողովի անդամ , /ավագանու անդամ/:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴՈՂՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

05.09.2013թ. Ն 9-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Դողս համայնքի շենքերի և կառույցների ուսումնասիրման և թերությունների հայտնաբերման համար ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի :
2.Հանձնաժողովի գործողության ժամկետը սահմանել մինչև 30.12.2014 թվականը:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Դողս համայնքի ղեկավար Մ.Ադամյան

2013թ. սեպտեմբերի 5
Գ. Դողս

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Ողջի գյուղական
համայնքի ղեկավարի 2013 թվականի
սեպտեմբերի 5-ի N 9-Ա կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

1. Համբարձումյան Ռաֆիկ՝ հանձնաժողովի նախագահ, /աշխատակազմի քարտուղար/:
2. Արմեն Ադամյան՝ հանձնաժողովի անդամ, /ավագանու անդամ/:
3. Աբրահամ Գրիգորյան՝ հանձնաժողովի անդամ , /ավագանու անդամ/:
4. Անուշ Թադևոսյան՝ հանձնաժողովի անդամ, /առաջատար մասնագետ/:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴՈՂՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

05.09.2013թ. N 10-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի թիվ 947-Ն որոշումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Ստեղծել բնակարային հարցերի ուսումնասիրման հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2.Հանձնաժողովին՝ ուսումնասիրել և ստուգել զոհված /մահացած/ կամ հաշմանդամ դարձած զինծառայողների /ազատամարտիկների / ընտանիքների բնակարանային պայմանները և արդյունքների վերաբերյալ ներկայացնել եզրակացություն:
3.Հանձնաժողովը գործելու է երեք տարի ժամկետով:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Դողս համայնքի ղեկավար Մ.Ադամյան

2013թ. սեպտեմբերի 5
Գ. Դողս

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Դողս գյուղական
համայնքի ղեկավարի 2013 թվականի
սեպտեմբերի 5-ի թիվ 10-Ա կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

1. Սարգսյան Գերասիմ՝ հանձնաժողովի նախագահ, / ավագանու անդամ /:
2. Համբարձումյան Վանուշ՝ հանձնաժողովի անդամ, /ավագանու անդամ/:
3. Հայրապետյան Սմբատ՝ հանձնաժողովի անդամ , /ավագանու անդամ/:
4. Ադամյան Արմեն՝ հանձնաժողովի անդամ, / ավագանու անդամ /:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴՈՂՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04.09.2013թ. N 14

ԴՂՈՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի «Վտանգավոր տարածքից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին» թիվ 1180-Ն որոշման, հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզպետի 02.07.20213թ-ի N 285 որոշման 4-րդ կետը, արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակ նախապես բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման պլանավորման, նախապատրաստման և անցկացման ապահովման նպատակով.

Որոշում եմ՝

1. Ստեղծել Դողս համայնքի բնակչության տարահանման հանձնաժողով՝ /համաձայն հավելված 1-ի/:

2. Դողս համայնքի տարահանման հանձնաժողովի կազմում ստեղծել աշխատանքային խմբեր՝ /համաձայն հավելված 2-ի/:

3. Հաստատել տարահանման հանձնաժողովի կանոնադրությունը /համաձայն հավելված 3-ի/:

4. Ստեղծել տարահանման հավաքակայան կուլտուրայի տանը՝ գ.Դողս Բաղրամյան փ. 1-ին նրբ.6

5. Որոշել տարահանման հավաքակայանի /ների/ կառուցվածքը և կազմը, մշակել ՏՀԿ /ԸՀԿ/ կառուցվածքային մարմինների գործառնական պարտականությունները և ներկայացնել հաստատման տասնօրյա ժամկետում:

6. Առաջարկել համայնքի տարածքում գործող կազմակերպությունների ղեկավարներին՝ ստեղծել օբյեկտային տարահանման հանձնաժողովներ:

7. Ուժը կորցրած ճանաչել համայնքապետի «Արմավիրի մարզի Դողս համայնքում բնակչության տարահանման հանձնաժողով ստեղծելու մասին» 2011 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 13 որոշումը:

8. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել համայնքի տարահանման հանձնաժողովի նախագահ Ռաֆիկ Համբարձումյանի վրա:

Դողս համայնքի ղեկավար Մ.Ադամյան

2013թ. սեպտեմբերի 4
գ. Դողս

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀՀ Արմավիրի մարզի Դողսի
գյուղապետի „04„ 09 2013թ.
թիվ 14 որոշման

Դողս համայնքի բնակչության տարահանման հանձնաժողովի կազմը.

Ռաֆիկ Համբարձումյան — Հանձնաժողովի նախագահ՝ Աշխատակազմի քարտուղար

Արմեն Աղամյան — Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Ավագանու անդամ

Իշխան Սահակյան — Հանձնաժողովի քարտուղար՝ Համայնքի բնակիչ

Հանձնաժողովի անդամներ, աշխատանքային խմբերի ղեկավարներ՝

Աբրահամ Գրիգորյան՝ ավագանու անդամ

Հովհաննես Մանուկյան ՝ համայնքի բնակիչ

Գերասիմ Սարգսյան ՝ ավագանու անդամ

Վանուշ Համբարձումյան ՝ ավագանու անդամ

Մայիս Խաչատրյան ՝ համայնքի բնակիչ

Հենրիկ Մաղաքյան՝ համայնքի բնակիչ

Վարազդատ Աղամյան՝ համայնքի բնակիչ

Նաիրի Գրիգորյան՝ համայնքի բնակիչ

Թեմուր Մստոյան՝ համայնքի բնակիչ

Արսեն Սաֆարյան՝ համայնքի բնակիչ

Հրայր Զաքարյան՝ համայնքի բնակիչ

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՀՀ Գեղարքունիքի մարզի Դողսի
համայնքի ավագանու «04» 09. 2013թ.
թիվ 14 որոշման

Դողս համայնքի բնակչության տարհանման հանձնաժողովի աշխատանքային խմբերը

1.Վտանգավոր տարածքից բնակչության դուրս բերման հաշվառման խումբ.

Խմբի ղեկավար՝ Աբրահամ Գրիգորյան, ավագանու անդամ

Խմբի անդամներ՝ Արսեն Սաֆարյան, համայնքի բնակիչ

Վարազդատ Աղամյան, համայնքի բնակիչ

Զավեն Համբարձումյան, համայնքի բնակիչ

2.Անվտանգ գոտում բնակչության տեղաբաշխման հաշվառման խումբ.

Խմբի ղեկավար՝ Հովհաննես Մանուկյան, համայնքի բնակիչ

Խմբի անդամներ՝ Հենրիկ Մաղաքյան, համայնքի բնակիչ

Թեմուր Մատոյան, համայնքի բնակիչ

Ալետ Սերբյան, համայնքի բնակիչ

3.Տրանսպորտային ապահովման խումբ.

Խմբի ղեկավար՝ Գերասիմ Սարգսյան, ավագանու անդամ

Խմբի անդամներ՝ Արամ Հարությունյան,ավագանու անդամ

Արտակ Ամիրյան, համայնքի բնակիչ

Նաիրի Գրիգորյան , համայնքի բնակիչ

4.Սննդամթերքի և նյութական արժեքների պաշարների հաշվառման խումբ.

Խմբի ղեկավար՝ Վանուշ Համբարձումյան, ավագանու անդամ

Խմբի անդամներ՝ Սմբատ Հայրապետյան , ավագանու անդամ

Աշոտ Սահակյան, համայնքի բնակիչ

Մարտուն Խաչատրյան, համայնքի բնակիչ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴՈՂՍ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18.09.2013թ. N 15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴՈՂՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական պաշտպանության մասին » Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության N 633-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2011թ-ի մայիսի 6-ի N 164 որոշման 5-րդ կետը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել Արմավիրի մարզի Դողս համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Դողս համայնքի ղեկավար Մ.Աղամյան

2013թ. սեպտեմբերի 18
գ.Դողս